Վիլյամ Սարոյան

Դաշնամուր

— Ամեն անգամ, երբ դաշնամուր եմ տեսնում, հուզվում եմ, — ասաց Բենը:

— Իսկապե՞ս հուզվում ես: Ինչո՞ւ, — հարցրեց Էմման:

— Չգիտեմ, — ասաց Բենը: — Եթե չես առարկում, մտնենք այս խանութը և անկյունի փոքրիկ դաշնամուրը փորձենք, լա՞վ:

— Նվագել գիտե՞ս, — հարցրեց Էմման:

— Դժվար թե նվագել անվանես այն, ինչ ես եմ անում:

— Իսկ դու ի՞նչ ես անում:

— Կտեսնե՛ս, — ասաց Բենը:

Նրանք մտան խանութ, մոտեցան փոքրիկ դաշնամուրին: Բենը ժպտում էր, և Էմման, նկատելով նրա ժպիտը, մտածեց, թե կարո՞ղ է, արդյոք, երբևէ հասկանալ նրան: Այդպես կքայլի նրա կողքով մի որոշ ժամանակ, կարծելով, թե հասկանում է, իսկ հետո, օրերից մի օր, կպարզվի, որ չի հասկացել:

Բենը, հայացքը խոնարհած, կանգնել ու նայում էր դաշնամուրին: «Նա հավանաբար դաշնամուրային լավ համերգ է լսել, — ենթադրեց Էմման, — և սիրում է այդ տիպի երաժշտությունը: Ու ամեն անգամ դաշնամուրի ստեղնաշար տեսնելով կամ պարզապես որևէ դաշնամուրի կողքով անցնելիս, վերհիշում է լսած երաժշտությունը և մտովի նորից վերապրում այն»:

— Նվագել գիտե՞ս, — դարձյալ հարցրեց Էմման:

Բենն իր շուրջը նայեց: Վաճառողները, ինչպես երևում էր, զբաղված էին:

— Ո՛չ, չգիտե՛մ, — ասաց նա:

Էմման տեսավ, թե ինչպես Բենի ձեռքերը գուրգուրանքով ձգվեցին դեպի սև ու սպիտակ ստեղները: Ասես իսկական դաշնակահարի ձեռքեր լինեին, և այդ րոպեին մի տարօրինակ զգացում համակեց աղջկան, շուրջն ամեն ինչ արտասովոր թվաց նրան: Նա հասկացավ, որ իր կողքին կանգնած է մեկը, որը երկար-երկար ժամանակ է արդեն, ինչ փորձում է մի շատ լավ բան հայտնաբերել իր մեջ: Բենի նման մարդը պետք է որ կարողանար դաշնամուր նվագել:

Բենը մի քանի մեղմ ակորդ վերցրեց: Ոչ ոք չէր մոտենում նրանց, և նա նույն դիրքով կանգնած, սկսեց անել այն, ինչը նրա բառերով ասած, դժվար թե նվագել կոչվի:

Եվ Էմման հասկացավ, որ դա պարզապես հրաշալի է:

Բենն ընդամենը կես րոպե նվագեց:

— Հաճելի է հնչում, — ասաց նա՝ նայելով Էմմային:

— Իսկ իմ կարծիքով դու հրաշալի ես նվագում, — ասաց Էմման:

— Ես ամենևին ինձ նկատի չունեմ, — ասաց Բենը: — Խոսքս դաշնամուրի մասին է: Հոյակապ հնչեղություն ունի, չնայած այդքան փոքր է:

Միջին տարիքի մի վաճառող մոտեցավ նրանց:

— Ողջո՛ւյն, — ասաց նա:

— Ողջո՛ւյն, — պատասխանեց Բենը: — Հոյակապ դաշնամուր է:

— Այո, շատերին է դուր գալիս, — ասաց վաճառողը: — Այս դաշնամուրը հրաշալի է հատկապես բնակարաններում դնելու համար: Եվ բավականին շատ էլ վաճառում ենք:

— Որքա՞ն է գինը, — հարցրեց Բենը:

— Երկու հարյուր քառասունինն ու հիսուն, — ասաց վաճառողը: — Կարող եք, իհարկե, և մաս-մաս վճարել:

— Որտե՞ղ են պատրաստում, — հարցրեց Բենը:

— Ստույգ չգիտեմ: Կարծեմ Ֆիլադելֆիայում: Կարող եմ պարզել:

— Մի անհանգստացեք, — ասաց Բենը: — Դուք նվագո՞ւմ եք:

— Ոչ, նվագել չգիտեմ:

Վաճառողը նկատեց, որ Բենը ցանկություն ունի մի քիչ էլ նվագելու:

— Խնդրե՛մ, դուք կարող եք էլի նվագել, — ասաց նա:

— Ես նվագել չգիտեմ:

— Ես լսում էի, երբ դուք նվագում էիք:

— Մի՞թե դա նվագել է: Ես ոչ մի ձայնանիշ չգիտեմ:

— Ինձ համար հաճելի էր լսել, — ասաց վաճառողը:

— Ինձ համար էլ, — ասաց Էմման: — Որքա՞ն պետք է մուծել առաջին անգամ:

— Մոտ քառասուն-հիսուն դոլար: Դե, խնդրեմ, — դարձավ նա Բենին, — մի բան նվագեք: Ես ուզում եմ լսել ձեզ:

— Եթե սա մի հարմարավետ սենյակում լիներ, — ասաց Բենը, — կարող էի ժամերով նստել դաշնամուրի առջև:

— Էլի, քիչ էլ նվագեք, ոչ ոք չի առարկի, — փորձեց համոզել վաճառողը:

Նա մոտեցրեց աթոռը, և Բենը նստեց ու սկսեց անել այն, ինչը, նրա բառերով ասած, դժվար թե նվագել կոչվեր: Մի քանի վայրկյան նվագելու ինչ-որ փորձեր արեց, այնուհետև երաժշտության նման մի բան գտավ և նվագեց մոտ երկու րոպե: Վերջացնելու վրա էր, երբ երաժշտությունն ավելի մեղմ ու թախծալի դարձավ, և Բենն ավելի ու ավելի հմայվեց դաշնամուրով: Նվագելու ժամանակ նա վաճառողի հետ խոսում էր դաշնամուրի մասին: Հետո դադարեց նվագել ու ոտքի կանգնեց:

— Երանի կարողանայի գնել, — ասաց նա: — Շնորհակալություն:

— Խնդրե՛մ, — ասաց վաճառողը:

Նրանք երկուսով դուրս եկան խանութից: Փողոցում Էմման ասաց .

— Իսկ ես ոչինչ չգիտեի . . .

— Ինչի՞ մասին, — հարցրեց Բենը:

— Քո մասին:

— Իսկ ի՞նչ չգիտեիր:

— Դե . . . որ դու այդպիսին ես:

— Իմ նախաճաշելու ժամն է, — ասաց Բենը: — Երեկոները ես միշտ մտածում եմ այն մասին, թե որքան լավ կլիներ, եթե դաշնամուր ունենայի:

Նրանք մտան մի փոքրիկ ռեստորան, նստեցին վաճառասեղանի մոտ և բուտերբրոդներ ու սուրճ պատվիրեցին:

— Որտե՞ղ ես նվագել սովորել, — հարցրեց Էմման:

— Եբեք էլ չեմ սովորել, — ասաց Բենը: — Որտեղ որ դաշնամուր եմ տեսնում, փորձում եմ նվագել: Նույնն էի անում, երբ դեռ պատանի էի: Այ թե ինչ բան է

փող չունենալը:

Նա նայեց Էմմային ու ժպտաց այնպես, ինչպես ժպտում էր դաշնամուրի մոտ կանգնած՝ ստեղնաշարին նայելիս: Էմման անչափ շոյված զգաց իրեն:

— Երբ մարդ փող չունի, — ասաց Բենը, — զրկվում է շատ ու շատ բաներից, որոնք ունենալու իրավունքն ունի:

— Այո՛, իսկապես այդպես է, — ասաց Էմման:

— Մի կողմից, — ասաց Բենը, — դա լավ է, բայց մյուս կողմից այնքան էլ լավ չի: Իրականում նույնիսկ ահավոր է:

Նա նորից նայեց Էմմային, ինչպես նախորդ անգամ, և Էմման ժպտաց նրան այնպես, ինչպես Բենն էր ժպտում իրեն:

Նրանք դուրս եկան ռեստորանից, ոտքով անցան երկու թաղամաս և հասան հանրախանութ, որտեղ աշխատում էր Էմման:

— Դե, առա՛յժմ, — ասաց Բենը:

— Ցտեսությո՛ւն, Բեն:

Բենը իջավ փողոցով, իսկ Էմման մտավ հանրախանութ: Աղջիկը համոզված էր, որ, այսպես թե այնպես, ինչ-որ մի օր Բենը դաշնամուր կունենա, ինչպես նաև՝ մնացած այն ամենը, ինչ այդքան ցանկանում է: